ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզի «Եղեգնաձոր համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հաստատության պարուսույցի /պարի խմբավար/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Նախադպրոցական ուսումնական հաստատության պարուսույցի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով սահմանված տարիֆառրակավորման պահանջների:

Պարուսույցի հաստիքի համար սահմանված է 0.5 դրույք՝ 93300 (իննսուներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ պաշտոնային դրույքաչափով:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձև 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 14-ը ներառյալ ամեն օր ժամը 10:00-16:00-ը բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից, ք. Եղեգնաձոր Կոմիտասի 13 հասցեում:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 25.03.2022թ-ի № 471-Ա/2 հրամանի մշակված հարցաշարերի:

Մրցույթի թեստային փուլը տեղի կունենա դեկտեմբերի 20-ին ժամը 13^{00}-ին, իսկ հարցազրույցի փուլը անցկացվում է նույն օրը թեստավորման արդյունքների հրապարակումից հետո՝ 15^{30}-ին, ք. Եղեգնաձոր Կոմիտասի 13 հասցեում:

Տեղեկությունների համար զանգահարել +374 94983344
Տնօրեն՝ Նատալյա Սողոմոնյան
Էլեկտրոնային փոստի հասցե՝ eghegnadzor.kaghaqitiv2mank@mail.ru